

ՎՐԱՄԱՏԱՆ

«ՅՐԱՆՅԵՆ» (ՆԱԺԱՐՈՅՅԸՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅԱ Է ՏԵՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 71- 72 (16267) ՇԱՐԱԹ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵՐԻ

ՆՈՐ ՈՒՍԱՐՎԱՆ ԸՆԴՈՒԱԶ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆ Է»

«2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՐԱՍՏԱՆԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒՍՈՒՐՍՆԵՐ, ԵՎ ԿՍԿՍՎԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ»

Սեպտեմբերի 9-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ հանրային կրթության նախարարի մանկավարժների հետ:



Վիճակը եւ քաջատեղյակ ենք, որ այդ ուղղությամբ մեծ ջանքեր պետք է ներդրվեն: Մշակվել է կրթության (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Հանդիպմանը վարչապետը հայտարարեց, որ կրթված հասարակությունն ի վիճակի է երկիրը վերածել արդի հաջող պետության: Հենց այդ նպատակին են ծառայում բոլոր այն ոլորտները, որոնք վերջին երկու տարիներին իրականացվել են կրթության ոլորտում, թեպետ վարչապետի խոսքերով, առաջիկայում կարելու քայլեր պետք է իրականացվեն: «Մենք մանրամասն ուսումնասիրել ենք կրթության համակարգում առկա իրա-

ՐԱՅԱՍՍԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ Է

Հայաստանի երրորդ Հանրապետությունը 23 տարեկան է

1990թ. օգոստոսի 23-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց Հայաստանի անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

Սեկտորի անց 1991-ի սեպտեմբերի 21-ին, Հայաստանում տեղի ունեցավ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ Հանրապետից հետո, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց քվեարկության արդյունքները. ըստ որի, հանրաքվեի մասնակիցների 94,99 տոկոսը կողմ քվեարկեց Հայաստանի անկախությանը: Հաջորդ օրը հրապարակվեց ՀՀ անդամիկ անկախ օրենսդիր մարմնի դիմումը հայ ժողովրդին.



«Ազատության ճանապարհին մեզ սպասում են նոր փորձություններ, դա ամենօրյա քննություն է լինելու մեզ համար: Պահպանենք մեր ոգեւորությունը, բայց համակվենք իրավապաշտությանը, շարունակենք մնալ երազող, բայց սթափ դատողությամբ»:

Ծնունդ առավ Հայաստանի երրորդ Հանրապետությունը՝ որպես Հայաստանի առաջին (1918-1920թթ.) եւ երկրորդ (խորհրդային 1920-1991թթ.) հանրապետությունների ժառանգորդ:

Սկսվեց Հայաստանի երրորդ Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացը: 1991թ. Հայաստանը դարձավ Անկախ Պետությունների Համագործակցության անդամ, 1992թ.՝ Միավորված ազգերի կազմակերպության անդամ: 2001-ից Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ է: 2002-ին Հայաստանն անդամագրվեց Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը:

ԿԱՆՉԿԱՅՎԻ «ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌԲ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՆՔԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Երեւանում, սեպտեմբերի 18-21-ը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշնչին, կանցկացվի «Հայրենիք-Սփյուռք» համահայկական հիմնադրոթղ համաժողովը:

Համահայկական համաժողովին իրավիքված են մասնակցելու համահայկական կառույցների ղեկավարները, ԶԼՍ-ների ղեկավարները, կրթության, մշակույթի, հոգեւոր ոլորտների ներկայացուցիչները:

Համաժողովը կանցկացվի երկու մասով՝ լիազուամար եւ ըստ ուղղությունների միասեր: Համաժողովի աշխատանքները կիրականացվեն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ թեմայով, երկրորդ թեման կառնչվի սիրիահայ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԵՐԿԱՅԱՅՎԵԼ ԵՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՅՄԱՆ ԱՌԱՋԱՐՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի սոցիալական գիտությունների կենտրոնը եւ Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիան համատեղ ուսումնասիրություն են իրականացրել՝ հասկանալու, թե ինչպիսի՞ն են հայ-վրացական հարաբերությունները, ի՞նչ մարտահրավերներ կան եւ հատկապես ինտեգրացիոն նոր ուղղության պարագայում ո՞ր են շարժվում երկու երկրները:

Տեսակետներն ամփոփված են «Հայ-վրացական հարաբերություններ. մարտահրավերներ եւ հնարավորություններ երկկողմ համագործակցության համար» գրքում, որի շնորհանդեսը կայացավ սեպ-

տեմբերի 6-ին: Թբիլիսիի պետական համալսարանի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու Փիք-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎԱԶԱԹԸ ԿՆՊԱՍՏԻ ԱՆՅԱՆՍԻ ԱՆԴԱՄԱԿՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին գոհ է ՆԱՏՕ-ի զագաթաժողովի արդյունքներից եւ այն գնահատականներից, որոնք տրվել են երկրի ղեկավարությանը այլաճանակցության ուղու վրա ձեռք բերած անդամակցության համար:



«Վրաստանն այսօր ունի համագործակցության մեխանիզմներ, որոնց խորացումը կնպաստի ՆԱՏՕ-ի չափորոշիչներին հասնելուն: Ձեռքբերումներից մե-

կը կարելի է համարել այն, որ մինչեւ այլաճանակցությանը անդամ դառնալը, Վրաստանը կլինի պաշտպանված: Այլաճանակցությունը մեր երկրին տված ծրարը իրենից ներկայացնում է միջոցառումների ընդլայնված համակարգ: Բնականաբար, մենք գոհ ենք զագաթաժողովի արդյունքներից եւ Վրաստանին ճանաչած առաջընթացի հարցով»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին եւ հավելեց, որ համագործակցության նոր ձեւաչափը Վրաստանին կնպաստի առավել լավ նախապատրաստվել ՆԱՏՕ-ի անդամակցությանը:

«Բարձր գնահատական տրվեց ժողովրդավարական այն բարեփոխումներին, որոնք իրականացվել են մեր երկրում: Դրանք թվում պաշտպանության նախարարության ոլորտում իրականացված բարեփոխումները: Բարձր գնահատական տրվեց նաեւ ISAF-ի շրջանակներում վրաց զինվորների հերոսությանն ու ներդրած ավանդին: Այդ տեսանկյունից, ընդգծվեց

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ԸՆԴՊԾՎԵՑ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 7-ին իր երկօրյա պաշտոնական այցով Վրաստանում էր գտնվում Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության նախարար Չակ Հեգելը:

Այցի շրջանակներում, ԱՄՆ ռազմական գերատեսչության ղեկավարը ԼՍՆ ռազմական գերատեսչության ղեկավարը հանդիպումներ ունեցավ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի հետ, եղավ Կրծանիսիի գործարժարանում, հանդիպում ունեցավ այնտեղ գործող ամերիկյան իրահանգիչների հետ: Վրաստանի նախարարը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ՀԱՍՏԱՏՎԵՑ ԲԱՅ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Սեպտեմբերի 5-ին Վրաստանի կառավարությունը հաստատեց արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանու կողմից ներկայացված 2014-2018 թվականների համար բաց կառավարման գործընկերային ծրագիրը:

Այն արդարադատության նախարարության համակարգման պայմաններում մշակվել է «Բաց կառա-

վարում-Վրաստան» ֆորումի շրջանակներում, որին մասնակցում էին հանրային կազմակերպություններ-

ի ոչ կառավարական հատվածի եւ միջազգային կազմակերպություններ (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

